ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ավանդական բժշկության համալսարանի 2021-2022 ուս. տարվա անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրով 091101.00.7- «Ստոմատոլոգիա» մասնագիտության շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման մասին

Ավանդական բժշկության համալսարանի ռեկտորի 28.04.2022թ-ի թիվ 564 հրամանով ես նշանակվել եմ Ավանդական բժշկության համալսարանի 2021-2022 ուստարվա անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրով 091101.00.7-«Ստոմատոլոգիա» մասնագիտության շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ:

Ռեկտորի հրամանով կազմվել են ատեստավորման հանձնաժողովներն ու ենթահանձնաժողովները: Ենթահանձնաժողովներում, բացի համալսարանի ամբիոնների դասախոսական կազմից ընդգրկվել են նաև հանրապետությունում ճանաչված այլ բժիշկ-ստոմատոլոգներ:

- Նախագահի տեղակալ՝ բ.գ.թ., Հ.Հակոբյան, «Ստոմատոլոգիայի» ամբիոնի վարիչ
- Հանձնաժողովի անդամ՝ Ա. Կարապետյան, ֆակուլտետի դեկան
- Քարտուղար՝ ուսումնական մասի վարիչ՝ Ա. Սարգսյան

Ենթահանձնաժողովի անդամներ՝

ա/ «Թերապևտիկ ստոմատոլոգիա և մանկական թերապևտիկ ստոմատոլոգիա»

2. Լ. Բարսեղյան՝ քննող դասախոս
3. Ա. Զեյնալյան՝ քննող դասախոս
3. Մ.Հակոբյան՝ Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանի «Օրթոպեդիկ ստոմատոլոգիայի» ամբիոնի դասախոս

բ/ «Օրթոպեդիկ ստոմատոլոգիա և օրթոդոնտիա»

1. Ա.Գևորգյան՝ քննող դասախոս
2. Ա. Դանիելյան՝ քննող դասախոս
3. Մ. Հարությունյան՝ բ.գ.թ.,Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանի «Օրթոպեդիկ ստոմատոլոգիայի» ամբիոնի դոցենտ

գ/ «Վիրաբուժական ստոմատոլոգիա և մանկական վիրաբուժական ստոմատոլոգիա»

1. Ն.Եղիազարյան՝ քննող դասախոս
2. Ա. Զեյնալյան՝ քննող դասախոս
3. Ա.Խաչատրյան՝«Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» ՓԲԸ-ի դիմածնոտային վիրաբույժ

Ռեկտորի հրամանով ամփոփիչ ատեստավորումները կազմակերպվել և անցկացվել էր ս/թ հունիսի 3-ից 21-ը, հետևյալ ժամանակացույցով.

- «Թերապևտիկ ստոմատոլոգիա և մանկական թերապևտիկ ստոմատոլոգիա» առարկայի ամփոփիչ ավարտական քննություններն անցկացնել 2 փուլով՝
  - Գործնական ունակությունների ստուգում - 03.06.2022թ.
  - Բանավոր քննություն - 07.06.2022թ.
- «Օրթոպեդիկ ստոմատոլոգիա և օրթոդոնտիա» առարկայի ամփոփիչ ավարտական քննություններն անցկացնել 2 փուլով՝
  - Գործնական ունակությունների ստուգում - 10.06.2022թ.
  - Բանավոր քննություն - 14.06.2022թ.
- «Վիրաբուժական ստոմատոլոգիա և մանկական վիրաբուժական ստոմատոլոգիա» առարկայի ամփոփիչ ավարտական քննություններն անցկացնել 2 փուլով՝
  - Գործնական ունակությունների ստուգում - 17.06.2022թ.
  - Բանավոր քննություն - 21.06.2022թ.

Ամբիոնների կողմից վերանայվել են «Թերապևտիկ ստոմատոլոգիա և մանկական թերապևտիկ ստոմատոլոգիա», «Վիրաբուժական ստոմատոլոգիա և մանկական վիրաբուժական ստոմատոլոգիա» և «Օրթոպեդիկ ստոմատոլոգիա և օրթոդոնտիա» առարկաների հարցաշարերը, կազմվել են քննական տոմսերը:

Ամփոփիչ ատեստավորման ժամանակ հանձնաժողովին տրամադրվեցին հետևյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝

- ✓ քաղվածք ամփոփիչ ատեստավորումների կազմակերպման և անցկացման մասին հրամանից,
- ✓ քաղվածք տվյալ առարկայից ամփոփիչ ատեստավորմանը թույլատրելու մասին հրամանից,
- ✓ ավարտական քննական առարկաներից ամբիոնի վարիչի բնութագիր՝ յուրաքանչյուր ուսանողի մասին,
- ✓ ուսանողի տարեկան գնահատականը տվյալ առարկայից,
- ✓ ուսանողների ստուգման գրքույկները:

Ամփոփիչ ատեստավորումը այս տարի կատարվել է առկա ձևաչափով՝ համաձայն համալսարանի կողմից հաստատված « ԱԲՀ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգ»-ի: Յուրաքանչյուր առարկայի ատեստավորումը անցկացվել է երկու փուլով: Առաջին փուլը վերաբերում էր գործնական հմտություններին (տոմսը պարունակում էր 2 հարց և 1 իրավիճակային խնդիր), երկրորդ փուլը՝ բանավոր՝ ընդգրկելով տեսական գիտելիքները (տոմսը պարունակում էր 3 հարց և 1 իրավիճակային խնդիր):

- ✓ Ուսանողին տրվել էր առավելագույնը 20 րոպե ժամանակ (պատրաստվելու և հարցերին պատասխանելու համար):
- ✓ Յուրաքանչյուր քննության համար կազմվել և հաստատվել էր ուսանողների մուտքի ժամանակացույց: Ամփոփիչ ատեստավորման յուրաքանչյուր փուլի ժամանակ ուսանողը ընտրում էր տոմսը առկա տարբերակներից: Քննությունների ձևաչափը թույլ էր տալիս բավարար չափով գնահատել ուսանողների թե գործնական ունակությունները, թե տեսական գիտելիքները, որոնք բավարարում էին մասնագիտական որակական պահանջներին:
- ✓ Ատեստավորման արդյունքներն ամփոփելիս հանձնաժողովի անդամները ևս համակարծիք էին, որ արդյունքները գոհացուցիչ էին: Ես այն կարծիքին եմ, որ համալսարանում ստեղծված են անհրաժեշտ բոլոր պայմանները՝ որակյալ բժիշկ-ստոմատոլոգներ պատրաստելու համար:
- ✓ Ամփոփիչ ատեստավորման արդյունքները հետևյալն են.

N	Առարկա	Ուսանող. թիվ	Գերա-զանց	Լավ	Բավար.	Անբավ.	Չի ներկայացել
1.	«Թերապևտիկ ստոմատոլոգիա և մանկական թերապևտիկ ստոմատոլոգիա»	14	3	9	2	-	-
2.	«Օրթոպեդիկ ստոմատոլոգիա և օրթոդոնտիա»	14	5	8	1	-	-
3.	«Վիրաբուժական ստոմատոլոգիա և մանկական վիրաբուժական ստոմատոլոգիա»	14	5	4	5	-	-

- ✓ Շրջանավարտներից Ֆաթեմեհ Դոուստդարարաբիի, Սարմադ Տարիք Ջամալ Ալ-Բայաթի, Սանա Ֆարայդուն Կամալի և' տեսական և' կլինիկական մտածողությունը բարձր մակարդակի վրա էր բոլոր երեք առարկաների քննությունների ընթացքում:
- ✓ Համալսարանը տեխնիկապես եւ նյութապես լիարժեք հագեցված էր՝ քննությունները կազմակերպելու համար:
- ✓ Ամփոփելով ամփոփիչ ատեստավորումները, պետք է արձանագրեմ, որ քննություններն անցել են բարձր մակարդակով, ուսանողները ունեին տեսական և գործնական գիտելիքների բարձր մակարդակ, որոնք ցուցաբերեցին բանավոր քննության և գործնական ունակությունների ստուգման ժամանակ:
- ✓ Հանձնաժողովն առաջարկում է հետագայում իրավիճակային խնդիրներում ավելացնել կլինիկական հետազոտությունների հետ կապված նկարներ

/սոնոգրաֆիկ, ՀՇ և այլն/ և հետազոտության պատասխաններ, ինչպես նաև գործնական ունակությունների ատեստավորման փուլում ավելի շատ ընդգրկել օրթոդոնտիա առարկայի վերաբերյալ հարցեր:

- ✓ Ավանդական բժշկության համալսարանի շրջանավարտները բուհում հմուտ դասախոսական կազմի շնորհիվ ստանում են լիարժեք գիտելիքներ:

ԱՄՓՈՓԻՉ ԱԿԱՐՏԱԿԱՆ

ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԱՀ՝

Բ.Գ.Թ. Ն. Բրսիկյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ավանդական բժշկության համալսարանի 2021-2022 ուս. տարվա անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրով 091201.00.7- «Բուժական գործ» մասնագիտության շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման մասին

Ավանդական բժշկության համալսարանի ռեկտորի 28.04.2022թ-ի թիվ 563 հրամանով ես նշանակվել եմ Ավանդական բժշկության համալսարանի 2021-2022 ուստարվա անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրով 091201.00.7-«Բուժական գործ» մասնագիտության շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ:

Ռեկտորի հրամանով կազմվել են ատեստավորման հանձնաժողովներն ու ենթահանձնաժողովները: Ենթահանձնաժողովներում, բացի համալսարանի ամբիոնների դասախոսական կազմից ընդգրկվել են նաև այլ բժիշկներ:

- Նախագահի տեղակալ՝ Անահիտ Կարապետյան՝ ֆակուլտետի դեկան
- Հանձնաժողովի անդամ՝ Արսեն Մինասյան՝ բ.գ.դ., պրոֆեսոր, Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր,
- Քարտուղար՝ ուսումնական մասի վարիչ՝ Ասյա Սարգսյան,

Ենթահանձնաժողովի անդամներ՝

ա/ «Ներքին հիվանդություններ»՝

1. Մ.Նազուխանյան՝ բ.գ.թ., «Թերապևտիկ առարկաների» ամբիոնի վարիչ
2. Հ. Հովհաննիսյան ՝ քննող դասախոս
3. Ա. Բախտիկյան՝ «Ս.Գրիգոր Լուսավորիչ» բ/կ բժիշկ-սրտաբան

բ/ «Մանկաբարձություն և գինեկոլոգիա»՝

1. Է.Ավագյան՝ բ.գ.թ., «Վիրաբուժական առարկաների թիվ 1» ամբիոնի վարիչ
2. Տ.Արշակյան ՝ քննող դասախոս
3. Ա.Ասատրյան՝ «Ս.Գրիգոր Լուսավորիչ» բ/կ ծննդատան մանկաբարձ-գինեկոլոգ

գ/ «Վիրաբուժական հիվանդություններ»՝

1. Ռ. Մանվելյան՝ բ.գ.դ., «Վիրաբուժական առարկաների թիվ 2» ամբիոնի վարիչ, քննող դասախոս
2. Ա. Սավայան՝ «Բժշկական գենետիկայի և առողջության առաջնային պահպանման կենտրոն»-ի պլաստիկ վիրաբույժ

Ռեկտորի հրամանով ամփոփիչ ատեստավորումները կազմակերպվել և անցկացվել էր ս/թ հունիսի 6-ից 22-ը, հետևյալ ժամանակացույցով.

- «Ներքին հիվանդություններ» առարկայի ամփոփիչ ավարտական քննություններն անցկացնել 2 փուլով՝
  - Գործնական ունակությունների ստուգում - 06.06.2022թ.
  - Բանավոր քննություն - 08.06.2022թ.
- «Մանկաբարձություն և գինեկոլոգիա» առարկայի ամփոփիչ ավարտական քննություններն անցկացնել 2 փուլով՝
  - Գործնական ունակությունների ստուգում - 13.06.2022թ.
  - Բանավոր քննություն - 15.06.2022թ.
- «Վիրաբուժական հիվանդություններ» առարկայի ամփոփիչ ավարտական քննություններն անցկացնել 2 փուլով՝
  - Գործնական ունակությունների ստուգում - 20.06.2022թ.
  - Բանավոր քննություն - 22.06.2022թ.

Ամբիոնների կողմից վերանայվել են «Ներքին հիվանդություններ», «Մանկաբարձություն և գինեկոլոգիա» և «Վիրաբուժական հիվանդություններ» առարկաների հարցաշարերը, կազմվել են քննական տոմսերը:

Ամփոփիչ ատեստավորման ժամանակ հանձնաժողովին տրամադրվեցին հետևյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝

- ✓ քաղվածք ամփոփիչ ատեստավորումների կազմակերպման և անցկացման մասին հրամանից,
- ✓ քաղվածք տվյալ առարկայից ամփոփիչ ատեստավորմանը թույլատրելու մասին հրամանից,
- ✓ ավարտական քննական առարկաներից ամբիոնի վարիչի բնութագիր՝ յուրաքանչյուր ուսանողի մասին,
- ✓ ուսանողի տարեկան գնահատականը տվյալ առարկայից,
- ✓ ուսանողների ստուգման գրքույկները:

Ամփոփիչ ատեստավորումը կատարվել է առկա ձևաչափով՝ համաձայն համալսարանի կողմից հաստատված « ԱԲՀ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգ»-ի: Ուսանողին տրվել էր առավելագույնը 20 րոպե ժամանակ (պատրաստվելու և հարցերին պատասխանելու համար):

Ուսանողների տեսական գիտելիքները բավարարում էին մասնագիտական որակական պահանջներին: Ուսանողները բավականաչափ վարժ և հմուտ ներկայացնում էին գործնական ունակությունները քննական 3 առարկաներից:

Ամփոփիչ ատեստավորման արդյունքները հետևյալն են.

N	Առարկա	Ուսանող. թիվ	Գերա-զանց	Լավ	Բավար.	Անբավ.	Չի ներկայացել
1.	«Ներքին հիվանդություններ»	19	4	8	7	-	-
2.	«Մանկաբարձություն և գինեկոլոգիա»	19	13	4	2	-	-
3.	«Վիրաբուժական հիվանդություններ»	19	14	4	1	-	-

Բոլոր երեք քննությունների ընթացքում բարձր գիտելիքներ է ցուցաբերել հետևյալ ուսանողները՝ Մոհամմեդ Աբդուլլահ Հասան, Շադ Շվան Աբդալլա, Ռանիահ Ռզգար Կակալ Ջաֆ, Սահմաա Բակր Մավլուդ, Աֆրոդին Կամիլ Համա Շարիֆ:

Ատեստավորման արդյունքներն ամփոփելիս հանձնաժողովի անդամները ևս համակարծիք էին, որ արդյունքները գոհացուցիչ էին: Ես այն կարծիքին եմ, որ համալսարանում ստեղծված են անհրաժեշտ բոլոր պայմանները՝ որակյալ բժիշկներ պատրաստելու համար:

ԱՄՓՈՓԻՉ ԱՎԱՐՏԱԿԱՆ
ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԱՀ՝
Բ.Գ.Թ. Ն. Մինասյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ավանդական բժշկության համալսարանի 2021-2022 ուս. տարվա անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրով 091201.00.7- «Բուժական գործ» մասնագիտության շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման մասին

Ավանդական բժշկության համալսարանի ռեկտորի 28.08.2022թ-ի թիվ 12 հրամանով ես նշանակվել եմ Ավանդական բժշկության համալսարանի 2021-2022 ուստարվա անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրով 091201.00.7-«Բուժական գործ» մասնագիտության շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ:

Ռեկտորի հրամանով կազմվել են ատեստավորման հանձնաժողովներն ու ենթահանձնաժողովները: Ենթահանձնաժողովներում, բացի համալսարանի ամբիոնների դասախոսական կազմից ընդգրկվել են նաև այլ բժիշկներ:

- Նախագահի տեղակալ՝ Անահիտ Կարապետյան՝ ֆակուլտետի դեկան
- Հանձնաժողովի անդամ՝ Արսեն Մինասյան՝ բ.գ.դ., պրոֆեսոր, Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր,
- Քարտուղար՝ ուսումնական մասի վարիչ՝ Ասյա Սարգսյան,

3. Առարկայական ենթահանձնաժողովների կազմում ընդգրկել՝

Ենթահանձնաժողովի անդամներ՝

ա/ «Ներքին հիվանդություններ»՝

2. Մ.Նազուխանյան՝ բ.գ.թ., «Թերապևտիկ առարկաների» ամբիոնի վարիչ
2. Հ. Հովհաննիսյան ՝ քննող դասախոս
3. Ա. Բախտիկյան՝ «Ս.Գրիգոր Լուսավորիչ» բ/կ բժիշկ-սրտաբան

բ/ «Մանկաբարձություն և գինեկոլոգիա»՝

1. Է.Ավագյան՝ բ.գ.թ., «Վիրաբուժական առարկաների թիվ 1» ամբիոնի վարիչ
2. Ն.Խլղաթյան՝ քննող դասախոս
3. Լ.Սահակյան՝ «Թիվ 15 պոլիկլինիկա»-յի կանանց կոնսուլտացիայի բաժնի վարիչ

գ/ «Վիրաբուժական հիվանդություններ»՝

4. Վ. Մկրտչյան՝ բ.գ.թ. «ԱՐԹՄԵԴ» ԲՎԿ-ում պլաստիկ վիրաբույժ
5. Ա.Մինասյան՝ բ.գ.դ., պրոֆեսոր, Ուս.աշխատանքների գծով պրոռեկտոր, «Ընդհանուր վիրաբուժություն», «Վիրաբուժական հիվանդություններ» առարկաների դասախոս

Ռեկտորի հրամանով ամփոփիչ ատեստավորումները կազմակերպվել և անցկացվել էր ս/թ սեպտեմբերի 26-ից հոկտեմբերի 14-ը, հետևյալ ժամանակացույցով.

- «Ներքին հիվանդություններ» առարկայի ամփոփիչ ավարտական քննություններն անցկացնել 2 փուլով՝

	602 խումբ	603 խումբ
- Գործնական ունակությունների ստուգում	- 26.09.2022թ.	- 03.10.2022թ.
- Բանավոր քննություն	- 29.09.2022թ.	- 06.10.2022թ.

- «Մանկաբարձություն և գինեկոլոգիա» առարկայի ամփոփիչ ավարտական քննություններն անցկացնել 2 փուլով՝

	602 խումբ	603 խումբ
- Գործնական ունակությունների ստուգում	- 04.10.2022թ.	- 27.09.2022թ.
- Բանավոր քննություն	- 07.10.2022թ.	- 30.09.2022թ.

- «Վիրաբուժական հիվանդություններ» առարկայի ամփոփիչ ավարտական քննություններն անցկացնել 2 փուլով՝

	602 խումբ	603 խումբ
- Գործնական ունակությունների ստուգում	- 11.10.2022թ.	- 10.10.2022թ.
- Բանավոր քննություն	- 14.10.2022թ.	- 13.10.2022թ.

Ամբիոնների կողմից վերանայվել են «Ներքին հիվանդություններ», «Մանկաբարձություն և գինեկոլոգիա» և «Վիրաբուժական հիվանդություններ» առարկաների հարցաշարերը, կազմվել են քննական տոմսերը, որոնց ես քաջատեղյակ եմ:

Ամփոփիչ ատեստավորման ժամանակ հանձնաժողովին տրամադրվեցին հետևյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝

- ✓ քաղվածք ամփոփիչ ատեստավորումների կազմակերպման և անցկացման մասին հրամանից,
- ✓ քաղվածք տվյալ առարկայից ամփոփիչ ատեստավորմանը թույլատրելու մասին հրամանից,
- ✓ ավարտական քննական առարկաներից ամբիոնի վարիչի բնութագիր՝ յուրաքանչյուր ուսանողի մասին,
- ✓ ուսանողի տարեկան գնահատականը տվյալ առարկայից,
- ✓ ուսանողների ստուգման գրքույկները:

Ամփոփիչ ատեստավորումը կատարվել է առկա ձևաչափով՝ համաձայն համալսարանի կողմից հաստատված « ԱԲՀ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգ»-ի:

Ամփոփիչ ատեստավորման արդյունքները հետևյալն են.

N	Առարկա	Ուսանող. թիվ	Գերա-զանց	Լավ	Բավար.	Անբավ.	Չի ներկայացել
1.	«Ներքին հիվանդություններ»	45	5	14	26	-	-
2.	«Մանկաբարձություն և գինեկոլոգիա»	45	8	22	15	-	-
3.	«Վիրաբուժական հիվանդություններ»	45	11	13	21	-	-

Քննական պայմանները լիովին համապատասխանել են ներկայացվող պահանջներին:

Քննություններն ընդհանուր առմամբ կազմակերպված էր պատշաճ, ուսանողների ներկայությունը եղել է լիարժեք: Հանձնաժողովի բոլոր անդամների կողմից ցուցաբերվել է անաչառ վերաբերմունք:

Ներկայացված քննական տոմսերը և իրավիճակային խնդիրները համապատասխանել են անցած նյութին: Ուսանողների հարաբերական առաջադիմության բարձր ցուցանիշը հաղիսացել է ուղիղ հետևանք դասախոսի անձնուրաց աշխատանքի և հետևողական մոտեցման, հատկապես հաշվի առնելով այն փաստը, որ ուսանողները տեղափոխվել են այլ համալսարանից:

Քննությանը հատկացված ժամանակաընթացքում ուսանողներն ունեցել են լիարժեք հնարավորություն՝ ներկայացնելու իրենց տեսական գիտելիքները, որոնք բավարարում էին մասնագիտական որակական պահանջներին: Տոմսերում առկա սիտուացիոն խնդիրների քննարկման ընթացքում ուսանողները փորձել են ներկայացնել յուրաքանչյուր դեպքը, հիմնվելով կլինիկական մտածողության վրա: Գործնական հմտությունների ստուգման փուլում ուսանողները բավականաչափ վարժ և հմուտ ներկայացնում էին գործնական ունակությունները քննական 3 առարկաներից:

Առաջարկում եմ ընդլայնել հետազոտման սիմուլյացիոն հնարավորությունները և ցանկը, ինչպես նաև ընդլայնել ուսանողների ուսուցման կլինիկական փուլի տևողությունը և հնարավորությունները՝ հնարավորություն տալով մասնակցելու վիրահատություններին:

Բոլոր երեք քննությունների ընթացքում բարձր գիտելիքներ են ցուցաբերել Նարմադիա Կրիշնամուրթին, Ռանջիտի Բալակրիշնանը, Աթիյաման Կաննուսամին, Անջալի Թոմասը, Նարիկ Տարա Յորան:

Ատեստավորման արդյունքներն ամփոփելիս հանձնաժողովի անդամները ևս համակարծիք էին, որ արդյունքները լավ էին:

Ես այն կարծիքին եմ, որ համալսարանում ստեղծված են անհրաժեշտ բոլոր պայմանները՝ որակյալ բժիշկներ պատրաստելու համար:

ԱՄՓՈՓԻՉ ԱՎԱՐՏԱԿԱՆ
ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԱՀ՝
Բ.Գ.Թ. Մ. Շմավոնյան